ռայել Աստուծոյ: Եւ է վանքն մինչեւ ցայս
օր, զոր մեք աչօք տեսաք: Եւ ասին թէ ԾՌ
ֆլորի է գնացել ի շինումն եւ ԾՌ ալ թողել 245
է վանիցն վախքֆ· զի որչափ կոյսք լինին,
անտից ուտեն եւ ըմպեն:

Եւ այլ բազում բանս եւ հրաշալի իրս
տեսաք եւ շինուածս զարմանալիս եւ անտեսս
տեսաք, զորս ոչ կարեմ գրել զամենայն մի 250
ըստ միոջէ եւ ծանուցանել ձեզ, սիրելի եղ-
բարք իմ, զի բազմութիւն խօսից տաղտկու-
թիւն տայ լսելեաց եւ յաճախումն խօսիցն
ձանձրացուցանեն զընթերցողս եւ քուն ածեն
ունկնդրողացն: 255

Բայց միլ մի հեռի ի քաղաքէն կայր վանք
մը ՍՈՒՐԲ ԳԻՈՐԳ անուն, զոր ՀԱՅՈՑ ՎԱՆՔ
կոչեն [1], խիստ զարմանալի եւ պատվական·
անդր թաղեն զՀայք:

ԳՈՐԾԱՐԱՆ ԱՊԱԿԵՂԻՆԱՑ Ի ՄՕՌԱՆ

Կայր քաղաք մի երկու միլ հեռու՝ ՄՕ- 260
ՌԱՆ անուն, ուստի էլանեն ազգի ազգի ազ-
նիւ ապակէ անօթք, ֆինճանք, սուլահիք,
զանազան գաւաթք եւ այլ յոլով բաներ, որ-
պէս ի Ղալաթիայ կու ծախվի· այն ամէնն

247 ըմպէն: — 254 զընթերցողս: — 255 յունկն-
դրողացն:

[1] Վանքը Բենեդիկտեանց կը վերաբերէր· ԺԴ·
դարէն սկսեալ հոն կը թաղէին Հայերը իրենց մե-
ռեալները· հմմտ· Հ· Ղ· Ալիշան՝ Հայ-Վենետ, էջ
152—153, 162—163: